ԳՅՈՒՆԻ

Կ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ Ա. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԱՌՆԻ

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և
պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
Երևան 2019

Գառնի ամրոցն Անտիկ Հայաստանի և, ընդհանրապես, ողջ Անդրկովկասի եզակի հնավայրերից է: Գտնվում է Երևանից 28 կմ արևելք, ՀՀ Կոտայքի մարզի համանուն գյուղում, Գեղամա լեռների դիմաց, Ազատ գետի աջ ափին, 3,5 հեկտար տարածք ընդգրկող եռանկյունաձև, զառիվայր, գեղադիր հրվանդանի վրա, որի կողմերն ունեն 180 մ x 330 մ x 330 մ չափեր: Հնավայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40°07′10″-ը և արևելյան երկայնության 44°43′23″-ը: Հուշարձանը ներառում է ամրոցի պարսպապատը, Միհր աստծո տաճարը, պալատական և աշխարհիկ կառույցները, արքայական բաղնիքը, վիշապ կոթողը, հնձանը, VII դ. եկեղեցին, միջնադարյան կամուրջը, մատուռը, խաչքարերը և այլ պատմամշակութային շինություններ ու արժեքներ: Պահպանական գոտին 5,1 հեկտար է:

Որպես հայկական պատմամշակութային ժառանգության եզակի հուշարձան, ՀՀ Մինիստրների խորհրդի 1988 թ. հունիսի 14-ի № 308 որոշմամբ Գառնի ամրոցը հռչակվել է պետական արգելոց և հանձնվել Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ տնօրինությանը, իսկ ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 27-ի № 09 որոշմամբ՝ անժամկետ և անհատույց օգտագործման տրվել ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին (կրճատ՝ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ)՝ որպես ««Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան» մասնաճյուղ:

XIV դ. հայերեն մի ձեռագիր, առանց բուն սկզբնաղբյուրը նշելու, հաղորդում է, որ Գառնին կառուցվել է մ.թ.ա. 2166 թ.: Բնակավայրի հիմնումը, ըստ V դ. պատմիչ Մովսես Խորենացու, հնամենի ավանդազրույցը կապում է հայոց ազգածին նահապետ Հայկի ծոռ Գեղամի հետ, ում թոռան՝ Գառնիկի անունով էլ ամրոցը հետագայում վերանվանվել է Գառնի: Այսուհանդերձ այս հնավայրի առայժմ ամենից վաղ ու հավաստի հին գրավոր հիշատակությունը՝ Գիառնիանի անվամբ, պահպանվել է Վանի թագավորության (Ուրարտու) տիրակալ Արգիշթի I-ի հենց ամրոցում բացված և մ.թ.ա. VIII դ. առաջին կեսով թվագրվող արձանագրության մեջ: Գառնի ամրոցի անվան մեկ այլ վաղ հիշատակության հեղինակը հռոմեացի պատմիչ Պուբլիոս Կոռնելիոս Տակիտոսն է (մոտ 50–120 թթ.), որը Հայաստանում 51-52 թթ. ծավալված իրադարձությունները նկարագրելիս՝ այս բնակավայրն անվանում է «Gornea»: Բնակավայրը հիշատակում են նաև վաղ միջնադարի հայ մատենագիրները: Ըստ Փավստոս Բուզանդի՝ դա խիստ ամրացված արքունի բերդ էր, ըստ Եղիշեի՝ քաղաք, իր անմատչելի ամրոցով, իսկ պատմիչ Սեբեոսի հաղորդման համաձայն՝ զորակայան:

Ամրոցում կատարված պեղումների արդյունքները հաստատում են, որ տարածքն իսկապես բնակեցվել է մ.թ.ա. IV հազ. վերջին քառորդից և, գրեթե առանց ընդմիջման, կյանքն այստեղ շարունակվել է մինչև ուշ միջնադար: XIII–XVII դդ. մոնղոլների, թուրքմենական քոչվոր ցեղերի, պարսիկ և թուրք նվաճողների պարբերաբար կրկնվող ասպատակություններից խարխլված բնակավայրի մի մասը և միջնաբերդի բոլոր կառույցները հիմնովին փլուզվել են 1679 թ. ավերիչ երկրաշարժի ժամանակ: Միայն մեկ ու կես դար անց՝ 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1830 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, Արևմտյան Հայաստանի Մակու քաղաքից և շրջակայքից գաղթած հայ բնակչության մի մասն ապաստանել է այստեղ ու վերաշինել լքված ու ավեր անդաստանը:

Ներկայիս Գառնին մեծ, շեն ու հարուստ բնակավայր է, զբաղեցնում է 5875 հեկտար տարածք և, վերջին մարդահամարի տվյալներով, ունի շուրջ 8000 բնակիչ:

Գառնի ամրոցի ընդհանուր տեսքը և ժամանակակից բնակավայրը



Գառնիի կուր-արաքսյան կլոր կացարաններից մեկի գծանկարը (ըստ Է. Խանզադյանի)

ԳԱՌՆԻԻ ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ

Գառնի ամրոցի առաջին պեղումներն իրականացրել է Նիկողայոս Մառը 1909-1911թթ.: Հուշաձանի պարբերական պեղումները սկսվել են II աշխ. պատերազմից հետո՝ 1949 թ., անվանի հնագետ, ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի ղեկավարությամբ: Այդ արշավախմբի կազմում, Գառնի ամրոցի վաղբրոնզեդարյան հնավայրի պեղումները 1949-1951 թթ. իրականացրել են հնագետներ Հարություն Մարտիրոսյանն ու Սանդրո Սարդարյանը: 1960-ական թթ. այդ աշխատանքները շարունակել է հնագետ Էմմա Խանզադյանը: Վաղբրոնզեդարյան շրջափուլին վերաբերող նյութական մշակույթի մնացորդներ հայտնաբերվել են Գառնի ամրոցի կենտրոնական հատվածում, տաճարին հարող տարածքում, բաղնիքի մոտ, շրջապարսպի տակ և այլուր:

Բացվել են կուր-արաքսյան վաղերկրագործական մշակույթին պատկանող երեք հնագիտական հորիզոններ՝ քարաշար հիմքով և աղյուսաշար վերնամասով բոլորակ կացարանների և դրանց կից մեծ ու փոքր ուղղանկյունաձև օժանդակ կառույցների ու տնտեսական հորերի մնացորդներով: Բոլորակ շինությունների մեջ պահպանվել են կենցաղային և ծիսական նշանակության կավե շրջանաձև օջախներ: Պեղվել են այդ փուլին բնորոշ սև-փայլեցված խեցեղենի բազմաթիվ նմուշներ, քարե կուռքեր, բազալտե սանդեր ու աղորիքներ, մարդակերպ կավե արձանիկների բեկորներ ու սայլի մանրակերտի մասեր, բրոնզե կացին ձուլելու քարե կաղապարի փեղկ, բրոնզե մանգաղ, ոսկրե և վանակատե բազմատեսակ գործիքներ, պերճանքի առարկաներ և այլն:

Գառնի ամրոցի վաղբրոնզեդարյան բնակավայրում հայտնաբերված բուսական և կենդանական նյութերի մնացորդները վկայում են, որ տեղաբնիկները հիմնավորապես զբաղվել են երկրագործությամբ ու անասնապահությամբ, մշակել են այգիներ, ցանել հացաբույսեր, պահել խոշոր և մանր եղջերավոր անասուններ, թռչուններ, խոզ, ձի, էշ, շուն և այլն: Ինչպես Հայկական լեռնաշխարհի կենտրոնական, հյուսիսային, հարավային և արևելյան շրջանների շատ տարածքներ, Գառնիի վաղբրոնզեդարյան բնակատեղին ևս էկոլոգիական, սոցիալական, ենթադրվող էթնիկական և այլ գործոնների ազդեցության տակ մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսից աստիճանաբար լքվել է ու ամայացել:

ԳԱՌՆԻՆ ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԻ ՇՐՋԱՓՈՒԼՈՒՄ

Ամրոցի ներսում և հարակից հատվածներում կատարված պեղումները վկայում են, որ մ.թ.ա. III հազ. վերջին քառորդից մինչև մ.թ.ա. XIX-XVIII դդ. այս տարածքը միջինբրոնզեդարյան կիսաքոչվոր-անասնապահական ցեղերի համար վերածվել է ժամանակավոր բնակության գոտու և արոտավայրի: Դա են վկայում տեղում հայտնաբերված և միջին բրոնզի շրջափուլի թռեղք-վանաձորյան մշակույթին պատկանող դամբարանային համալիրների նյութերը: Միջին բրոնզի շրջափուլի վերջին (մ.թ.ա. XVIII - XVI դդ.), սևան-արցախյան և կարմիրբերդյան մշակութային խմբերի աստիճանական տարածման փուլում, ինչպես Հայկական լեռնաշխարհի շատ հատվածներում, այստեղ ևս նոր մշակույթների էթնիկ կրողների ազդեցության տակ նկատվում է կիսաքոչվոր-անասնապահական ցեղերի մի մասի աստիճանական անցումը նստակեցության: Դրա փաստացի վկայությունը՝ ամրոցի ներսում և հարակից տարածքներում բացված վերջին փուլի միջինբրոնզեդարյան սոցիալ-մշակութային իրողությունները հաստատող նյութական մնացորդներն են:

Գառնիի միջին բրոնզի շրջափուլի բնակավայրի սահմաններն այսօր դժվար է ստույգ ներկայացնել: Ամրոցի պարսպապատի հիմքերում, II, III և VI աշտարակների տակ՝ մոտ 4,5 մ խորությունից հայտնաբերված գունազարդ և գալարադրոշմիչով նախշազարդված սև կավանոթների բեկորները թույլ են տալիս ենթադրել, որ միջինբրոնզեդարյան բնակավայրն անտիկ ամրոցից մեծ տարածք է զբաղեցրել:

Միջինբրոնզեդարյան գծանկարներ Գառնիից

ԳԱՌՆԻՆ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ՇՐՋԱՓՈՒԼԵՐՈՒՄ

Այս ժամանակահատվածի նյութերն ամրոցի տարածքում համեմատաբար քիչ են: Հիմնական բնակատեղին գտնվել է Գառնիի ամրոցից արևելք, Ազատ գետի հովտի հարթեցված վերնամասով հրվանդանի վրա, որի երկարությունը մոտ 270 մ է, լայնքը՝ 80 մ: Հրվանդանի մակերևույթը հյուսիս – հարավ ուղղությամբ սահմանազատված է երկու կիկլոպյան պարսպաշարերով: Արևելյան պարսպաշարը տեղադրվել է դեպի հրվանդանի վերին հատվածը տանող ճանապարհի վրա և նախատեսված է եղել հարձակումների ժամանակ պաշտպանելու ուշբրոնզեդարյան – վաղերկաթեդարյան ամրոցի մուտքը: Երկրորդ պարսպաշարը կառուցվել է հրվանդանի միջնամասի ամենանեղ հատվածում և ձգվում է հյուսիսից հարավ: Կիկլոպյան պարիսպը հատկապես լավ է պահպանվել ամրոցի մուտքի մոտ: Շարվածքի երկարությունը 59,0 մ է, լայնությունը՝ 7,0 մ: Բնակատեղին տարածվել է երկրորդ պարսպից դեպի արևմուտք: Բնակարանները հիմնականում կիսագետնափոր են, ունեն քառանկյուն կառուցվածք և շարվել են միջին մեծության անմշակ քարաբեկորներով: Կառույցների ներսում հայտնաբերված խեցեղենի բեկորները ցույց են տալիս, որ բնակավայրը հիմնադրվել է ուշ բրոնզի շրջափուլի սկզբում (մ.թ.ա. XV – XIV դդ):

Համաժամանակյա դամբարանադաշտի հետքերը նկատելի են ամրոցից հյուսիսարևմուտք տարածվող լեռնալանջին: Պահպանված դամբանախցերը հիմնականում քարարկղեր են և պարունակում են ուշբրոնզեդարյան և վաղերկաթեդարյան նյութեր: Ըստ ամենայնի՝ բնակավայրն առանց էական խաթարումների գոյատևել է մինչև մ.թ.ա. IX դ. առաջին քառորդը:

ԳԱՌՆԻՆ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ (ՈՒՐԱՐՏՈՒԻ) ԿԱԶՄՈՒՄ

Արգիշթի Ի-ի (մ.թ.ա. 786-764 թթ.) օրոք, մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին Շիրակի հարթավայրը, Արարատյան դաշտը և Սևանա լճի ավազանը ներառվել են Վանի թագավորության (Ուրարտուի) կազմում: Այդ շրջանում հզոր տերության մեջ է մտել նաև Գեղամա լեռների հարավարևմտյան լանջերին գտնվող Գառնիի երկաթեդարյան բնակատեղին: Ամրոցի տարածքում 1963 թ. կատարված պեղումների ընթացքում անտիկ տաճարից ոչ հեռու՝ պալատական դահլիճի ներսում հայտնաբերվել է բազալտե վիշապակոթողի ստորին կես, որի դիմային հատվածում պահպանվել է Արգիշթի Ի-ի սեպագիրը: Տեքստը հաղորդում է. «Խալդյան զորությամբ Արգիշթին ասում է. նվաճեցի (երկիր) Գիառնիանին՝(արքա) Սիլունիի երկիրը: Թշնամական լեռներից երբ վերադարձա, տղամարդկանց, կանանց քշեցի»:

Սա Գառնի տեղանվան առայժմ անմենավաղ հիշատակվող տարբերակն է: Տեքստում հիշատակվում է նաև երկրի կառավարիչ (արքա) Սիլունին, ում հպատակներին՝ տղամարդկանց ու կանանց, ուրարտացի արքան տեղահան է արել հայրենի բնակավայրերից: Դժվար է այսօր հաստատապես ասել թե ինչ տարածքներ է ներառել մ.թ.ա. VIII դ. առաջին կեսին հիշատակվող Գիառնիանի երկիրը, սակայն այն հանգամանքը, որ Արգիշթի Ի-ը հատուկ արձանագրություն է կանգնեցրել այս երկրի հպատակեցման առթիվ և գերեվարել է տեղաբնիկներին, թույլ է տալիս ենթադրել, որ Գիառնիանի երկիրը ռազմավարական առումով որոշակի դեր է խաղացել Արարատյան դաշտից դեպի Գեղամա լեռներ, Սևանա լճի ավազան և ընդհանրապես հյուսիս տանող բանուկ ճանապարհների խաչմերուկում: Վանի թագավորության (Ուրարտուի) ներկայությունը Գառնիում հաստատվում է նաև հնագիտական այլ գտածոներով: Մասնավորապես այդ շրջանին է վերաբերում վաղերկաթեդարյան բնակավայրում հայտնաբերված գլանաձև կնիքը, որի դրոշմող մակերեսի փորագիր հորինվածքը (կենաց ծառի առջև կանգնած այծ) որոշակի զուգահեռներ ունի Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) մ.թ.ա. VIII - VII դդ. գտածոներում: Ամրոցում հայտնաբերված սակավաթիվ նյութերը վկայում են, որ այստեղ կյանքը շարունակվել է նաև հետուրարտական շրջանում՝ հայ Երվանդունիների գահակալության ժամանակ:

Գառնիի վիշապակոթողն ու սեպագիր արձանագրությունը



Գառնիի ձորը (գծանկարը Ռ. Քեր-Փորթերի)

ԳԱՌՆԻՆ ՈՒՇ ԱՆՏԻԿ (ՀՌՈՄԵԱԿԱՆ) ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Գառնի ամրոցի հետազոտման հիմքերը դրել է շվեցարացի հնագետ, ճանապարհորդ և բնագետ Ֆրեդերիկ Դյուբուա դը Մոնպերեն 1834 թ., որից հետո XIX-XX դդ. համալիրի ուսումնասիրմամբ զբաղվել են մի խումբ օտարազգի և հայ մասնագետներ: Նրանց մեծ մասի կարծիքով, ամրոցի մեզ հասած պալատական շենքերի մի մասն ու պաշտպանական պարիսպը, ամենայն հավանականությամբ, կառուցվել են մ.թ.ա. III-II դդ, իսկ ավելի ուշ վեր են խոյացել սյունազարդ տաճարը և արքունական բաղնիքը: Այդ մասնագետների թվում էր նաև անգլիացի հայտնի գրող, նկարիչ, դիվանագետ և ճանապարհորդ Ռոբերտ Քեր-Փորթերը, ով XIX դ. առաջին կեսին լինելով Հայաստանում, որոշ գծանկարներ է կատարել Գառնի ամրոցի ավերակներում:



Գառնիի հեթանոսական տաճարի ավերակները (գծանկարը Ռ. Քեր-Փորթերի)



Գառնի ամրոցի ընդհանուր հատակագիծը պարիսպներով և արքունական կառույցների հատվածը

ԳԱՌՆԻԻ ԱՄՐՈՑԸ

Հնավայրն օղակող պաշտպանական պարիսպը վեր է խոյացել եռանկյունանձև հրվանդանի վերնամասում: Այն հարավային, հարավ-արևմտյան, մասամբ նաև արևելյան կողմերից շրջափակված է անմատույց ժայռերով: Մեղացած հատվածում իրար հաջորդ 14 ուղղանկյունանձև աշտարակները և ամրակուռ պարսպապատերը կազմել են հզոր պաշտպանական համակարգ: Հրվանդանի առավել անմատչելի հատվածներում, որտեղից ոսոխի հարձակումը հետ մղելն ավելի դյուրին էր, աշտարակները կառուցվել են իրարից 25,0 – 32,0 մ հեռավորությամբ, իսկ համեմատաբար մատչելի մասերում դրանք միմյանց ավելի մոտ են տեղադրված և շարվել են ընդհանուր պարսպագծից 10-13,5 մ ավելի ներս: Ամրաշինական այս հնարքը ստեղծել է ներս ընկած պարսպի աղեղնանձև հատված, որի մատչելի թվացող միջնատարածքը ներխուժած թշնամին դարձել է առավել խոցելի:

Սարահարթի կողմից ամրոցը պաշտպանված է 314 մ ընդհանուր երկարություն ունեցող հզոր պարիսպով: Պարսպապատերն ունեն մոտ 2,0 մ լայնք և առանձին մասերում պահպանվել են 6,0-8,0 մ բարձրությամբ: Ամրոցի պարսպապատերի ընդհանուր շարում նկատվում են տարաժամանակյա վերակառուցումների հինգ տարբեր շինարարական հորիզոններ: Ինչպես պարսպապատերը, այնպես էլ աշտարակները կառուցված են խոշոր չափերի ու կանոնավոր ձևի տեղական կիսամշակ կապտավուն բազալտի (որձաքարի) խոշոր քարաբեկորներով, որոնց քաշը՝ 4-5 տ է: Շինարարական առաջին երկու փուլերում կառուցված հատվածի քարերը հորիզոնական ուղղությամբ միացված են երկաթե գամերով, որոնց միացման հանգույցներում հալած կապար է լցվել: Մուտքը հյուսիսային կողմից է: Ամրոցի առջև եղել է նաև քաղաքատիպ բնակավայր, որի հետքերը ծածկվել են միջնադարի և նոր ժամանակների կառուցապատումներով:



Տրդատ Ի-ի հունարեն արձանագրությունը

Ամրոցի պատմական զարգացման փուլերի ճշգրտման և վերակառուցումների հաջորդականությունը պարզելու համար հույժ կարևոր է աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանի կողմից 1945 թ. Գառնի գյուղի գերեզմանոցում հայտնաբերված հունարեն արձանագրությունը, որը հայտնում է.

«Հելիոս.... Տրդատ Մեծ, տերը Մեծ Հայաստանի.... Տիրակալը թագուհու համար կառուցեց տաճարն ու բերդն այս անառիկ իր թագավորության 11 տարում....»:

Ըստ վերոնշյալ տեքստի՝ Մեծ Հայքի թագավոր Տրդատ Ի-ն իր գահակալության օրոք, մ.թ. 77 թ., շինարական և վերականգնման աշխատանքներ է կատարել ամրոցում: Կ. Վ. Տրևերի կարծիքով այդ աշխատանքներն իրականացվել են Հռոմում Ներոն կայսեր կողմից Տրդատ Ի-ին Արտաշատ մայրաքաղաքի վերականգնման համար հատկացված դրամական միջոցների հաշվին:

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐ

Մատենագիտական վկայությունների, վիմագիր նյութերի, կառուցվածքային առանձնահատկությունների և ճարտարապետական ոճի ուսումնասիրությունների հիման վրա հետազոտողները եզրակացրել են, որ տաճարն իրոք կառուցվել է I դ. երկրորդ կեսին: Դա ոչ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում պահպանված ուշ անտիկ (հռոմեական) դարաշրջանի եզակի ճարտարապետական հուշարձան է: Տաճարը կառուցվել է մինչև 1,5 մ երկարության, լավ մշակված տեղական կապտավուն որձաքարից (բազալտ): Պատերը շարվել են առանց շաղախի՝ չոր շարով: Քարերն ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ ուղղությամբ ամրացվել են երկաթե գամերով, իսկ դրանց միացման հանգույցներն ամրացվել հալած կապարով:

Տաճարն իր հորինվածքով հունական պերիպտերոս է՝ կանգնեցված հռոմեական պատվանդանի (պոդիում) վրա, իսկ հատակագծում՝5,05 մ x 7,98 մ չափերով, մոտ 40 մ2 մակերես ունեցող ուղղանկյուն դահլիճ՝ արտաքուստ շրջապատված լայնական ճակատներում վեցական, երկայնական ճակատներում՝ հոնիական ոճի ութական սյուներով:

Ենթադրություն կա, որ այդ 24 սյուները խորհրդանշել են օրվա 24 ժամերը: Կառույցի հարդարանքն աչքի է ընկնում գեղարվեստական կատարման մեծ վարպետությամբ: Սյուների խոյակները զարդարված են բարձրաքանդակ ձվարդներով (ձվաձև զարդամոտիվ) և գալարազարդերով, քիվը՝ առյուծի գլուխներով, արմավենիկներով ու ականթոսի տերևներով:

Կառույցն իր ճարտարապետական մի շարք մանրամասներով տարբերվում է արևմտափոքրասիական և հյուսիսսիրիական համաժամանակյա հուշարձաններից: Կարևոր առանձնահատկություններից են խոյակների միջնատարածքներում և քիվերի վրա չկրկնվող զարդագոտիների հարստությունն ու բազմազանությունը: Հայ արվեստին հատուկ բուսական (խաղող, նուռ, ընկուզենու տերևներ) և կենդանական (առյուծի գլուխներ) զարդանախշերը և դրանց պլաստիկ հարդարանքը, ինչպես նաև բազալտե քանդակների կատարման տեխնիկան վկայում են, որ տաճարի կառուցմանը հիմնականում մասնակցել են տեղացի վարպետներ:

Շենքի ճակատի ամբողջ լայնությամբ ձգվում են 0,30 մ բարձրության



9 շարք աստիճաններ, որոնք շինությանը տալիս են հանդիսավորություն և վեհություն: Դրանք երկու կողմից ներփակված են պատվանդաններով, որոնց դիմային հատվածներում քանդակված են մեկ ոտքին ծնկած և ձեռքերը վեր պարզած կերպարներ՝ հավանաբար ատլանտներ: Նրանցից մեկը նայում է արևելք, մյուսը՝ արևմուտք: Կարծիք կա, որ պատվանդանների վրա ժամանակին դրվել են զոհարաններ: Տաճարը նվիրված է եղել արևի աստված Միհրին: Միհրը, իբրև լույսի, ճշմարտության խորհրդանիշ, հաճախ պատկերվել է ցլի (խավարի) դեմ մարտնչելիս: Տաճարի ներսում գոյություն ունեցող խորանի պատվանդանին դրված է եղել ցլի դեմ մենամարտող Միհր աստծո արձանը:

Տաճարը կանգուն վիճակում մնացել է մինչև XVII դ. և կործանվել է 1679 թ. ավերիչ երկրաշարժից: Ի տարբերություն հայկական ճարտարապետության շատ օրինակների, Գառնի տաճարի մանրամասն գրավոր նկարագրությունը և նրա պատկերը չեն պահպանվել միջնադարի հայերեն գրավոր սկզբնաղբյուրներում, մանրանկարչության մեջ,



Հեթանոսական տաճարի ճակտոնի, առաստաղի և քիվի քանդակազարդ մանրամասներ



Գառնիի հեթանոսական տաճարի ավերակներն ու վերականգնման աշխատանքները

որմնանկարներում և խճանկարներում:

Հուշարձանի կործանումից շուրջ մեկ ու կես դար անց միայն շվեցարացի գիտնական Ֆ. Դյուբուա դը Մոնպերեն փորձել է վերստեղծել տաճարի նախնական տեսքն ու անդրանիկ նախագիծը: Դրան հաջորդեցին ճարտարապետ Կ. Ռոմանովի՝ 1912 թ., իսկ ավելի ուշ՝ անվանի ճարտարապետ Ն. Բունիաթյանի (1933 թ.) վերակազմություններն ու նախագծերը:

Ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերված նոր նյութերի հիման վրա ճարտարապետ Ալ. Սահինյանը 1968թ. կազմեց նոր նախագիծ, որը նախորդներից առանձնանում է իր փաստառատ հիմնավորումներով և ճարտարապետական համարձակ լուծումներով: Մանրազնին ուսումնասիրելով տաճարի պահպանված մնացորդներն ու հորինվածքային մանրամասները՝ ճարտարապետը հանգեց այն մտքին, որ տաճարը երկթեք տանիքին ունեցել է երդիկ: Հենց այս նախագծի հիման վրա էլ 1968-1976 թթ., Ալ. Սահինյանի ամենօրյա հսկողությամբ իրականացվեց տաճարի վերականգնումը:

Դա կատարվեց հենց այն նույն տեխնիկական եղանակով, ինչպես որ կառուցվել էր I դարում: Շարի քարերը դարձյալ միացվեցին երկաթե գամերով և ամրակայվեցին կապարով: Բացակայող ճարտարապետական մանրամասերի փոխարեն դրվեցին նորերը՝ առանց քանդակների, և տաճարի հիմնադրումից ուղիղ 1900 տարի անց, կառույցը կրկին ստացավ իր նախնական տեսքը:

ՊԱԼԱՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Տաճարից մի քանի մետր արևմուտք՝ հրվանդանի ուղղաձիգ ժայռերի շուրթին, բարձրացել են պալատական շենքերը: Պեղումների շնորհիվ առայժմ բացված են ավելի քան 40 մ երկարությամբ եւ մոտ 15 մ լայնությամբ արքունի ապարանքի մնացորդները: Բացված հատվածի հարավային կեսում գտնվում է կամարակապ, 1:2 համաչափությամբ մի խոշոր դահլիճ, իսկ մյուս կեսում բացվել են տարբեր չափերի ու նշանակության բազմաթիվ սենյակներ: Դահլիճից պահպանվել է արևելյան և հյուսիսային պատերը՝ համապատասխանաբար՝ 2,5-3,0 մ և 1,0-2,0 մ բարձրությամբ: Ըստ ամենայնի կառույցը եղել է երկհարկանի: Պալատական համալիրի սենյակներից մեկի ներսի ծեփին պահպանվել են մուգ վարդագույն ներկի հետքեր, որոնք խոսում են պալատական սենյակների և արքունական դահլիճների որմերի հարուստ հարդարանքի մասին:

Այս մասում պահպանվել է նաև երեք բաժիններից բաղկացած հնձանը, որտեղ խաղողը ճզմվել է առանձին խցում, այնուհետև հյութը կավե խողովակով հասել է երկրորդ սենյակ, լցվել մեծ կարասի մեջ: Կարասից դա խողովակով հոսել է դեպի երկրորդ կարասը և, այստեղ ավելի զտվելով, հոսել ու լցվել երրորդ կարասի մեջ:

Պալատական շենքի մնացորդների մի մասը գտնվում է VII դ. կառուցված՝ կլոր հատակագծով, քառախորան, կենտրոնագմբեթ Սբ Սիոն հայկական եկեղեցու հիմքերի տակ, ինչն էլ հաստատում է, որ VII դ. արդեն Գառնի ամրոցի պալատական համալիրն ամբողջովին ավերված է եղել:

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԲԱՂՆԻՔ

Պալատական համալիրից մնացած ամենաարժեքավոր կառույցն արքունի բաղնիքն է: Այն գտնվում է տաճարից մոտ 50 մ հյուսիսարևմուտք և կառուցվել է պալատական մյուս շինությունների շինարարական տեխնիկայով և օգտագործված նյութերով: Թեև ծածկի ճշգրիտ ձևն անհայտ է, այսուհանդերձ պեղումների ժամանակ հայտնաբերված առաստաղի ծեփի կորագիծ բեկորները ցույց են տալիս, որ դա, ըստ ամենայնի, ունեցել է թաղակապ տեսք: Բաղնիքն ունի միևնույն ուղղությամբ իրար հաջորդող չորս սենյակներ, հիմքում՝ հիպոկաուստ համակարգով: Սենյակների՝ հարավարևելք ուղղված պատերն արտաքուստ կոր են, ներքուստ՝ կիսաշրջանաձև:

Լոգասենյակների կրկնակի հատակների տակ համաչափ տեղադրվել են կրաշաղախի բարակ շերտով իրար ամրացված՝ 6,0-7,0 սմ հաստությամբ և 20,0-25,0 սմ տրամագծով սկավառակաձև աղյուսների բազմաթիվ սյունիկներ: Սյունիկների վրա դրվել են խոշոր սալեր (6,0-7,0 սմ հաստությամբ, 60-70 սմ2 մակերեսով), ապա ծածկվել են կրի, ավազի և աղացած աղյուսի 5,0-8,0 սմ հաստությամբ շաղախով: Կրակարանից եկող տաք օդն ու ծուխը, անցնելով սյունիկների արանքներով, տաքացրել են նախ տաք ջրի համար նախատեսված լոգասենյակը, ապա զգալիորեն պակասած ջերմությամբ մուտք գործել գոլ ջրի համար նախատեսված բաժանմունք և վերջում, արդեն բոլորովին նվազած ջերմությամբ, հասել սառը ջրի համար նախատեսված լոգասենյակ: Այսպիսով, բաղնիքի լոգարանները տաքացվել են ըստ անհրաժեշտության, և ջերմության կորուստ տեղի չի ունեցել:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում նախասրահի (հանդերձարանի) հատակի խճանկարը: Հայտնաբերվել է 1953 թ.: Խճանկարն ունի հարուստ հորինվածք և հավաքված է Ազատ գետի հունից բերված՝ 15 երանգի բնական քարերի 1,0-1,5 սմ2 չափի խորանարդիկներից:

Գառնիի բաղնիքը պեղումներից հետո և նրա ընդհանուր տեսքն այսօր

Հորինվածքի ընդհանուր հիմնագույնը բաց-կանաչավուն է: Խճանկարի կենտրոնում, գույների նուրբ համադրությամբ պատկերված է հյուսկեն զարդագոտիով շրջանակ, որի ներսում բազմագույն խորանարդիկների միջոցով վարպետորեն ներկայացված են Օվկիանոսի և Ծովի մարդակերպ կիսանդրիները, առաջինը՝ թավ գիսակներով, եղջերավոր, առնական տղամարդու տեսքով, իսկ երկրորդը՝ բարետես, գեղաչյա կնոջ կերպարանքով և գլխից աջ ու ձախ տարածվող խեցգետնի շոշափուկներով: Զույգ պատկերների գլխավերևում, գինեգույն խորանարդաձև քարերով հավաքված է հունարեն խորհրդավոր մակագրություն. «Աշխատեցինք՝ ոչինչ չստանալով»: Հյուսկեն ուղղանկյուն շրջանակի միջնատարածքում պատկերված են հունական առասպելաբանությունից հայտնի իխթիոկենտավրոսներ, ներեիդներ (ծովինարներ), ձկնորսներ, ձկներ, ոստրեներ, դելֆին, մարդակերպ աստվածություններ և այն: Դրանցից յուրաքանչյուրի մոտ հունարենով գրված են անունները (Օկեանուս, Թալաս, Գլավկոս, Թետիս, Էրոս, Պիթո, Պոթոս, Պելեոս և այլն): Խճանկարի տարբեր հատվածներում տեղադրված են «ծովի խորք», «ծովային անդորր», «գեղեցկություն», «ծովափ» հունարեն արտահայտությունները: Իր հորինվածքային մանրամասերով Գառնիի ուշ անտիկ բաղնիքի խճանկարը որոշակի ընդհանրություններ ունի պատմական Այնթափի մոտ պեղված կոմագենյան Զևգմա քաղաքի պեղումներից հայտնի երկու կառույցների և Իսրայելի Խիրբեթ Հանութ անտիկ հնավայրի հատակներին բացված խճանկարների (IV դ.) հետ:

Գառնիի բաղնիքի խճանկարի ինչպես սյուժեն, ոճային և գունային առանձնահատկությունները, այնպես էլ կառույցի ճարտարապետական ձևերն ու հարդարումը հիմք են տալիս կառույցը թվագրելու III դ. վերջով:



Հատվածներ Գառնիի արքունի բաղնիքի խճանկարից



Գառնիի և Խիրբեթ Հանութի խճանկարները

Զևգմայի խճանկարները

Միհրի տաճարի խորանը

ԳԱՌՆԻ ԱՄՐՈՑԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն հռչակվելուց (301թ.) հետո թեև հին ամրոցներն ու պաշտպանական համալիրները հիմնականում մնացին անխաթար, սակայն հեթանոսական պաշտամունքային հուշարձանները հիմնահատակ կործանվեցին: Միայն առանձին տեղերում որոշ մեհյաններ հարմարեցվեցին նոր կրոնի պահանջներին և վերաշինվեցին որպես քրիստոնեական սրբատեղիներ: Բացառություն է կազմում Գառնիի տաճարը: Սա պահպանվեց նույնությամբ, վերածվեց աշխարհիկ կառույցի և, ըստ Մովսես Խորենացու, դարձավ Տրդատ III թագավորի քրոջ՝ Խոսրովադուխտի «տուն հովանոցը»: Նոր հավատքի հետևորդները միայն կտոր-կտոր արեցին տաճարի խորանում տեղադրված՝ ցլի դեմ մարտնչող Միհրի արձանախումբը և նետեցին ձ[illegible]

Հարյուր[illegible]ակներ անց, պեղումների ժամանակ տաճարի մոտ գտնվել է սպիտակ մարմարից քանդակված ցլի կճղակ, որը, մասնագետների կարծիքով, հենց

Ցուլի մարմարե արձանի բեկոր

այդ արձանախմբի մասն է կազմել: Երկու այլ բեկորներ՝ցլի մարմարե գլուխը և արձանախմբի պատվանդանի մասը, պատահաբար հայտնաբերվել են 2011 թ., դարավանդի զառիվեր լանջին:

Գառնի ամրոցը միջնադարում ևս պահպանեց իր դերն ու ռազմավարական նշանակությունը: VII դ. առաջին կեսին, տաճարին կից կառուցվեց խաչաձև հիմքով, կլոր հատակագծով, կենտրոնագմբեթ Սբ. Սիոն զվարթնոցատիպ եկեղեցին:

Դատելով պահպանված ճարտարապետական մանրամասերից՝ կառույցի պատուհաններն ունեցել են քանդակազարդ պսակներ: Եկեղեցու մուտքի աջ կողմում թաղված է Հայոց կաթողիկոս Մաշտոց Եղվարդեցին (833-898 թթ.): XIII դ. նրա դամբարանի վրա մատուռ է կառուցվել:

Ամրոցը հիմնովին ավերվել է արաբական արշավանքների ժամանակ, բայց պվանը պահպանել է իր գոյությունը և IX դ. երկրորդ կեսին աճել ու դարձել է գյուղաքաղաք: X դ. սկզբին, Աշոտ II Բագրատունի թագավորի օրոք, վերականգնվել է նաև ամրոցը: Հավանաբար արդ շրջանում է կառուցվել նաև Գառնիի ձորում գտնող կամուրջը:

X-XV դդ. Գառնին եղել է Հայաստանի առավել խոշոր և նշանավոր գյուղաքաղաքներից մեկը: Ամրոցի շրջակայքում պահպանվել են վաղ և զարգացած միջնադարի ճարտարապետական կառույցների մնացորդներ: Դրանցից են Խումարաժամ եկեղեցին (IV-V դդ.), Սբ Աստվածածին միանավ եկեղեցին (XII-XIII դդ.), «Մաշտոց հայրապետ» կամ «Սումպենց վանք» վանական համալիրը (XII-XIII դդ.), Սբ Աստվածածին եռանավ եկեղեցին (XVII-XIX դդ.), մատուռներ, խաչքարեր և այլն:

Գառնիի միջնադարյան կամուրջը մինչև վերանորոգումը և դրանից հետո

«ԳԱՌՆԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆ ԱՅՍՕՐ

Որպես հայկական պատմամշակութային ժառանգության եզակի հուշարձան, ՀՀ Մինիստրների խորհրդի 1988 թ. հունիսի 14-ի № 308 որոշմամբ Գառնի ամրոցը հռչակվել է պետական արգելոց և հանձնվել Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ տնօրինությանը, իսկ ՀՀ կառավարության 2003 թ. մարտի 7-ի № 312-Ն որոշմամբ՝ անժամկետ և անհատույց օգտագործման տրվել ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին (կրճատ՝ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ)՝ որպես «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան» մասնաճյուղ:

2002-2003 թթ. Լինսի հիմնադրամի միջոցներով «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան մասնաճյուղում իրականացվեցին վերականգնման և բարեկարգման զգալի աշխատանքներ: Մասամբ վերականգնվեց պարսպապատի մուտքի մասը՝ հարակից երկու աշտարակներով, անտիկ բաղնիքն ամբողջովին առնվեց ծածկի տակ, վերաշարվեցին պալատական դահլիճի և հարակից շինությունների խարխուլ պատերը, սալապատվեց տաճարի առջևի հրապարակը, կառուցվեցին անցուղիներ ու դիտակետ: 2009 թ. ձայնականացվեց արգելոց-թանգարանի ողջ տարածքը, և Գառնի տաճարի շուրջ տեղադրվեց գեղարվեստական լուսավորման համակարգ, ինչն արգելոց-թանգարանին հնարավորություն ընձեռեց գարնան, ամռան և աշնան ամիսներին աշխատանքները կազմակերպելու նաև երեկոյան ժամերին:

Այսօր ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան մասնաճյուղը ակտիվ և հաստատուն մշակութային օջախ է: Այստեղ պարբերաբար գիտական, մշակութային, կրթական ծրագրեր և բազմաբնույթ միջոցառումներ են իրականացվում: 2017 թ. ընթացքում հուշարձան են այցելել շուրջ 350000 զբոսաշրջիկներ, մասնագետներ և ուսանողներ Երևանից, հանրապետության մարզերից, աշխարհի տարբեր երկրներից:

Հաշվի առնելով այս ամենը՝ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան մասնաճյուղի գործունեության հետագա բարելավման, համակողմանի ուսումնասիրման ու թանգարանային նոր շենքի կառուցման արդիական ծրագիր է մշակել, որը 2011 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակութային բնապատկերի պահպանման և կառավարման» Մելինա Մերկուրիի (Հունաստան) միջազգային հեղինակավոր մրցանակաբաշխությունում հաղթող ճանաչվեց տասնյակ երկրներից ներկայացված համաբնույթ ծրագրերի մեջ և ստացավ որպես առաջին մրցանակ:

Հնամենի Գառնին ապրում է նորօրյա լիարժեք կյանքով, նոր վեհությամբ ու անկրկնելիությամբ շարունակելով գերել, հրապուրել ու զարմացնել բոլոր այցելուներին, դեռևս չբացահայտված նոր, մեծաթիվ պատմամշակութային գանձեր ունի հրամցնելու համաշխարհային հանրությանը...

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

9 789939 867335